

## ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայ-ռուսական (ալավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ

### ՍՈՍԱՏԻԿ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁՈՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Սույն գիտական հոդվածում, մարդու սոմատիկ իրավունքների լույսի ներքո ուսումնասիրվել են մարդու ֆիզիկական անձեռնմխելիության, մարդու ինքնավարության, մարմնական իրավունքների իրացման հարցերը: Քննարկվել են մարդու կոնկրետ սոմատիկ իրավունքից իրաժարման, սոմատիկ իրավունքի սահմանափակման, համաշափության կանոնի, օրյեկտիվ սահմանափակումների կիրառման հարցերը, ինչպես նաև՝ պետության դերակատարությունը այդ իրավունքների միջամտության ժամանակ: Ուսումնասիրվել են իրավունքի իրաժարման և իրավունքի կորստի տարբերությունները, իրավունքի և ազատության վերաբերյալ մոտեցումները, հանրային և մասնավոր շահի հակասությունները՝ շեշտադրելով մարդու ֆիզիկական անձեռնմխելիության կարևորությունը: Քննարկման առարկա են դարձել նյութափական և դատավարափական որոշ հարցեր՝ մարդու ֆիզիկական անձեռնմխելիության, մարդու մասնավոր կյանքի միջամտության շրջանակում:

*Հիմնարարեր՝ մարդու ֆիզիկական անձեռնմխելիություն, մարդու ինքնավարություն, սուրյեկտիվ իրավունքից իրաժարման, մասնավոր կյանք:*

Մարդու սոմատիկ իրավունքներ<sup>1</sup> ասելով անհամեշտ է հասկանալ այն իրավունքների համախումբը, որը վերաբերում է մարդու մարմնի, օրգանի, հյուսվածքի, քջի՝ ազատ, ըստ մարդու հայեցողության օգտագործման, վերահսկման հետ, այսինքն՝ այն մարդուն արված հնարավորություն է կառավարելու իր մարմինը:

Մարդու անձեռնմխելիությունը մարդու քննական իրավունքն է, քանզի մարդու հանդիսանում է իր մարմնի սեփականատերը, ազատ է կառավարել իր մարմինն այնպես, ինչպես կցանկանա (այդ բվում լինել ազատ պետության միջամտությունից), եթե այդ ազատությունը չի հատում օրյեկտիվ, արդարացված սահմանափակումների գիծը:

Որոշ հեղինակներ կարծում են, որ մարմնի տիրապետման լիազորությունը իրականցվում է ոչ թե սեփականության իրավունքի, այլ մարդու ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի, պաշտպանության համատեքսության:

Մարդու ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը բացարձակ քննոյթ ունի, որը ներառում է մարդու իրավասություն՝ ինքնուրույն օգտագործել և կառավարել իր մարմինը, օրգանները, հյուսվածքները, ինչպես նաև պահանջել, որ մյուսները ձեռնպահ մնան այդ իրավունքը խախտելուց:

Մարդու անձեռնմխելիությունը սերտորեն կապված է մարդու ինքնավարության (ավտոնոմիայի), մարդու մարմնի ազատականացման՝ գաղափարների հետ:

Ինքնավարությունը չի նշանակում, թե մարդը կարող է անել այն ամենը, ինչ ցանկանում է (այսինքն՝ խոսքը ամենաբողոքյան, անարխիայի մա-

սին չէ), այլ նշանակում է, որ մարդը պետք է կարողանա (հնարավորություն ունենա) սեփական կյանքը վերահսկել, հնարավորություն ունենա որոշումները ընդունել և այդ որոշումները հարգվեն այլոց կողմից:

Մարդու անձեռնմխելիությունը բաղկացած է 2 շերտից՝ ֆիզիկական և հոգևոր անձեռնմխելիություն: Մարդու սոմատիկ իրավունքների համատեքսություն փոխկապակցված է ֆիզիկական անձեռնմխելիության ոլորտը, քանզի երկուսի հիմքում էլ ընկած է մարդու մարմնի ազատականացման, ինքնավարության գաղափարը:

Ֆիզիկական անձեռնմխելիությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր մարդու մարմինն ազատ է, չի կարող լինել որևէ միջամտություն առանց մարդու համաձայնության, այսինքն՝ չի կարող խախտել մարդու ֆիզիկական, մարմնական ամրողականությունը:

Հոգևոր անձեռնմխելիությունը<sup>6</sup> ենթադրում է, որ մարդը չափություն է ենթարկվի հոգեբանական ճնշման, նվաստացնող վերաբերմունքի, այսինքն՝ մարդը պետք է ունենա ներդաշնակ զարգացման հնարավորություն:

Վերը նշվածի համատեքսություն հարց է առաջանում, թե որքանով է մարդու ազատ իրականացնելու իր սոմատիկ իրավունքները, արդյոք պետությունը կարող է միջամտել մարդու սոմատիկ իրավունքների իրացմանը, սահմանափակել մարդու ֆիզիկական անձեռնմխելիությունը, մարդու սոմատիկ իրավունքի իրացումը, արդյոք իրավունքի սուրյեկտը կարող է հրաժարվել իր կոնկրետ սոմատիկ իրավունքից:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

**Իրավունքի իրացման համատերսում իրավունքի սուբյեկտի ազատության չափը**

Ցուրաքանչյուր ոք ազատ է անել այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները, այսինքն՝ մարդուն տրված է հնարավորություն՝ ընտրելու վարքագծի տարրերակ: Ընտրության հնարավորության մեջ մարդն ազատ է, սակայն այդ ազատությունը բացարձակ չէ, քանզի այդ ազատությունը սահմանափակվում է այնտեղ և այն պահին, որտեղ և որ պահին առաջանում է այլոց իրավունքներն ու ազատությունները խախտելու իրական վտանգը:

Հարցը դիտարկելով սոմատիկ իրավունքների համատերսում կարող ենք նշել, որ մարդն ազատ է իր հայեցողությամբ, ցանկությամբ ազատորեն դեկավարել, վերահսկել իր մարմինը՝ պայմանով, որ այդ իրավունքի իրացումը կամ ազատության դրսերում չի հանգեցնի այլոց իրավունքների և ազատությունների խախտման, ուսնահարման:

Օրինակ, անձը ցանկանում է մարմինը տրանսֆորմացնել, փոխակերպել (ձևափոխել), որի արդյունքում կատարում է քրի վիրահատություն կամ կենսաբանական սերի փոփոխում: Սույն իրավիճակում անձն ազատորեն իրականացնում է իր սոմատիկ իրավունքը՝ մարմինը կամ օրգանը իր ցանկությամբ ձևափոխելու իրավունքը, իսկ արդյունքում՝ չեն խախտվում այլոց իրավունքներն ու ազատությունները: Ազատության չափը, որը դրսերում է սուբյեկտիվ իրավունքի կրողը, իրավաչափ է, որի արդյունքում, բավարարելով իր մասնավոր շահերը, չի խախտում նաև այլոց շահերը: Այլոց շահեր ասելով ոչ թե պետք է հասկանալ, որ բոլորը կողմ են տվյալ անձի քրի վիրահատություն կատարելուն կամ կենսաբանական սեր փոփոխելուն, այլ պետության կողմից սահմանված իրավաչափ արգելուք չափեար է խախտվի: Այսինքն՝ անձը, իրացնելով իր սոմատիկ իրավունքը, դրսերել է իրավաչափ վարքագիծ, չի խախտել իրավական նորմերը, իրավական արգելուները:

Սեկ այլ օրինակ, եթե արական սերի ներկայացուցիչը ինքնախտեղում (ոտքի հեռացում) է կատարում: Առաջին հայացքից թվում է, որ անձը ազատորեն իրացրել է իր սոմատիկ իրավունքը, այն է՝ իր մարմինը, օրգանը վերահսկելու իր իրավունքը, քանզի ինըն է իր և իր մարմնի սեփականատերը: Եթե հարցը դիտարկում ենք այն տեսանկյունից, որ ինքնախտեղման արդյունքում անձը կազատվի պարտադիր զինվորական ծառայությունից, կստացվի մի իրավիճակ, որ անձը ինքնախտեղումը կատարել է պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու համար: Այսինքն, սույն իրավիճակում ազատությունը, որը անձը դրսերել է, խախտում է այլոց՝ հասարակության շահերը, այն է՝ հասարակության, պետության անվտանգությունը և ուսնահարել է իրավական արգելուք:

Հետևաբար, վերաբերելի օրինակում առաջանում է ոչ իրավաչափ վարքագիծի, իրավախախտման հարցեր:

Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ մարդու սոմատիկ իրավունքների իրացման դեպքում մարդը գործում է իր կամքով, իրացնում է իր սուբյեկտիվ իրավունքը, ընտրում է վարքագիծի համապատասխան մողել, դրսերում է ազատություն, սակայն այդ ազատությունը անսահմանափակ չէ, քանզի առկա են որոշակի սահմանափակումներ, որոնք կանվանենք օրյեկտիվ սահմանափակումներ, որոնց առկայությամբ անձը չպետք է դրսերի բացարձակ ազատություն:

Եթեմն հարց է առաջանում, թե արդյոք պետությունն ունի՞ պոզիտիվ պարտավորություն՝ ստեղծելու հնարավորություն սուբյեկտիվ իրավունքների իրացման համար: Հարցի պատասխանը միանշանակ է՝ եթե պետությունը պոզիտիվ պարտականություն է ստանձնել ճանաչելու կոնկրետ իրավունքը և երաշխավորելու դրա իրացումը, ապա պարտավոր է դրա համար համապատասխան պայմաններ ստեղծել: Օրինակ՝ խոսում ենք մարդու կյանքի իրավունքի մասին, որն ամրագրված է գրեթե բոլոր միջազգային իրավական փաստաթղթերում, ինչի արդյունքում պետությունը պարտավոր է քայլեր ձեռնարկել այդ իրավունքի պահպանման հարցում: Միևնույն ժամանակ զիտակցում ենք, որ անձը անմահ չէ, սակայն հիմնականում պետությունները չեն ամրագրում մարդու մահանալու իրավունքը: Սույն տեսակետը երբեմն կապված է այն կանխավարկածի հետ, որ պոզիտիվացնելով մարդու մահանալու իրավունքը, պետությունը կճանաչի բարեսպանության՝ էվթանագիայի գաղափարը, ինչի արդյունքում պետությունը պարտավորված կլինի պայմաններ (իրավական, տեխնիկական և այլն) ապահովել, որպեսզի անձը կարողանա պատշաճ իրականացնել իր մահվան իրավունքը, որը երբեմն անվանում են արժանապատիվ և խաղաղ մահանալու իրավունք:

Իրավունքի և ազատության տարրերությունն այն է, որ ազատությունը ենթադրում է իրավական հնարավորություն՝ կոնկրետ ոլորտում վարել իր գործերն առանց պետության միջամտության<sup>11</sup>, ինչպես նաև պետության պոզիտիվ պարտավորության բացակայություն՝ պայմաններ ստեղծել՝ այդ ազատության դրսերման համար: Օրինակ՝ Սահմանադրության մեջ ամրագրելով աշխատանքի ընտրության ազատությունը՝ պետությունը չի ստանձնում պարտավորություն՝ ստեղծելու աշխատատեղեր, որպեսզի յուրաքանչյուր ոք, իր մասմազիտական ունակություններին համապատասխան, աշխատի, այլ պետությունը ուղղակի ընդգծում է, որ յուրաքանչյուր ոք կարող է կատարել այն աշխատանքը, ինչ ցանկանում է, այսինքն՝ արգելված չէ: Իրավունքը ենթադրում է դասական մոտեցում, որ

մեկի իրավունքին համապատասխանում է մյուսի պարտականությունը, այսինքն՝ եթե իրավունքի սուբյեկտն ունի իրավունք, ապա պետությունը պարտավոր է ապահովել պայմաններ այդ իրավունքի իրացման համար: Օրինակ՝ եթե պետությունն ամրագրում է, որ մարդասիրական փոխպատվաստումը թույլատրելի է, այսինքն՝ ամրագրում է մարդասիրական փոխպատվաստման, բնակչության բժշկական օգնություն ստանալու իրավունքը, հետևաբար պետությունը պետք է պայմաններ ապահովի այդ փոխպատվաստման իրականացման համար՝ ստեղծի կանոններ, հաստատություններ, ներգրավի համապատասխան մասնագետներ և այլն, հետևաբար՝ պետությունը ստանձնել է պողիտիվ պարտավորություն՝ ապահովելու վերը նշված իրավունքների իրականացումը:

Հետևաբար կարող ենք փաստել, որ մարդն ազատ է իրականացնելու իր սումատիկ իրավունքները, եթե դրանով չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները:

Այսինքն՝ մարդն ազատ է իրականացնելու իր սումատիկ իրավունքները, սակայն ինչպես ցանկացած ազատության դրսորուման, իրավունքի իրացման, այդ թվում սումատիկ իրավունքների դեպքում, այդ ազատության չափը անսահմանափակ չէ: Եթե այդ ազատության դրսորումը կամ իրավունքի իրացումը կհանգեցնի այլ շահի ոտնահարման, ապա այդ ազատության դրսորումը պետք է կանգ առնի: Ստացվում է մի իրավիճակ, որ մարդն ունի ազատություն դրսորելու հնարավորություն, սակայն չունի այն բացարձակ իրականացնելու հնարավորություն: Եթե խոսում ենք օրյեկտիվ սահմանափակումների մասին, խոսքը ոչ թե ցանկացած սահմանափակման, խոշընդոտի մասին է, այլ այն սահմանափակման, եթե համաշափության թեստի, կանոնի կիրառման արդյունքում տեսանելի կլինի, որ սումատիկ իրավունքի բացարձակ իրացումը կիսախտի պաշտպանվող այլ շահ: Ցուրաքանչյուր դեպքում երկու շահերի բախման խնդիր է առաջանում, և պետք է առաջնորդվենք այն շահով, որն առավել կենսական է, կարևոր, որով ավելի բարձր արժեք են պաշտպանում, փրկում: Օրինակ՝ եթե մարդուն ազատություն տանք վաճառելու իր սիրտը, որով իր երեխաներին կփրկի սովոր, կստացվի՝ կոտնահարենք մի արժեք՝ մարդու կյանքը, բայց կփրկենք մեկ այլ շահ՝ երեխաների առողջ զարգացումը: Կարծում ենք՝ նման իրավիճակում պետությունը պետք է սահմանափակի մարդու սումատիկ իրավունքի իրացումը, քանզի մի շահ վնասելով և մյուսը փրկելով պետությունը իր հիմնական ֆունկցիան չկատարեց: Մեկ այլ օրինակ, եթե անձը վաճառում է իր մեկ երիկամը՝ իր երեխաներին սովոր փրկելու համար: Սույն դեպքում մեկ երիկամի վաճառքը չի հանգեցնի մարդու կյանքի կորստի,

հետևաբար մարդը կարող է ազատ իրացնել իր սումատիկ իրավունքը՝ վաճառել իր մեկ երիկամը, արդյունքում փրկվում է նաև մեկ այլ շահ՝ երեխաների առողջ զարգացումը:

Համաշափության սկզբունքի կիրառումը իրավունքից հրաժարման և իրավունքի սահմանափակման համատեքստում

Քննարկելով մարդու սումատիկ իրավունքների հարցը՝ անհրաժեշտ է անդրադառնալ այնպիսի իրավական երևոյթների, ինչպիսիք են՝ մարդու սումատիկ իրավունքների սահմանափակումը և մարդու սումատիկ իրավունքներից հրաժարումը:

Իրավունքի սահմանափակումը իրավունքի բովանդակության, եռյան նվազեցումն է, սահմանափակումը, արգելումը: Իրավունքի սահմանափակումը կապված է մարդ-պետություն հարաբերության հետ, քանզի իրավունքը սահմանափակումը պետությունն է, օրինակ՝ արտակարգ իրավիճակներում պետությունն արգելում է որոշ իրավունքների իրականացումը կամ նեղացնում է որոշ իրավունքների իրացումը: Սահմանափակումը բացարձակ չէ, հետևաբար այն պետք է իրականացվի որոշակի օբյեկտիվ չափանիշներ հաշվի առնելով, մասնավորապես՝ ցանկացած իրավունքի սահմանափակում ենթադրում է լեզիտիմ, իրավաչափ նպատակ, կիրառված միջոցների պիտանիություն, անհրաժեշտություն, ինչպես նաև՝ համարժեքություն (հավասարակշռություն, ողջամտություն) նպատակի և կիրառված միջոցի միջև:

Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում, եթե մարդու սումատիկ իրավունքների իրացման սահմանափակման հարց է առաջ գալիս, անհրաժեշտ է քննարկել, թե որքանով է պետությունը դեկավարվել վերը նշված սկզբունքով, որը իրավաբանական գրականության մեջ կոչվում է համաշափության սկզբունք, կանոն:

Պետությունը թույլատրում է, որպեսզի մարդը, օգտագործելով իր մարմինը, փոխնակության ծառայություններ մատուցի, սակայն այն իրավիճակում, եթե մարդը, իր մարմինն օգտագործելով՝ փորձում է սեռական ծառայություն մատուցել, ապա այս իրավիճակում պետությունը արգելում է: Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, եթե պետությունը արգելման եղանակով սահմանափակում է սեռական ծառայություն մատուցման հնարավորությունը, մարմինն ազատորեն վերահսկելու մարդու իրավունքը՝ չկիրառելով համաշափության սկզբունքը, այն է՝ սահմանափակումը ինչ նպատակ է հետապնդում, արդյո՞ք ընտրված միջոցը պիտանի է, անհրաժեշտ, արդյո՞ք առկա է հավասարակշռություն նպատակի և սահմանափակման միջև:

Մարդու սումատիկ իրավունքների հարցում խնդրի բարդությունն այն է, որ հիմնականում պետությունն ամրագրած, պողիտիվացրած չի լինում

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մարդու կոնկրետ սոմատիկ իրավունքը՝ ինչն էլ բարդություններ է ստեղծում այն մասով, որ դժվար է լինում համաշափության սկզբունքի կիրառումը:

Համաշափության սկզբունքի համատեքստում անհրաժեշտ է հասկանալ պետության միջամտության սահմանները, թե որ դեպքերում և ինչ չափով պետությունը կարող է միջամտել մարդու սոմատիկ իրավունքների իրացմանը:

Կոնկրետ միջամտության չափի հարցում հասկանալի է, քանի համաշափության սկզբունքի կիրառման շնորհիվ կարող ենք հասկանալ, թե որքանով էր իրավաշափ այդ սահմափանակումը:

Ինչ վերաբերում է իրավիճակներին, դեպքերին, թե որ դեպքում պետությունը կարող է սահմանափակել, միջամտել, ապա սույն մասով պետք է նշել, որ մարդու իրավունքը ենթակա է սահմանափակման, եթե անհրաժեշտ է ավելի բարձր բարիք, արժեք պաշտպանել: Բարձրագույն արժեք կամ բարիք կարող է լինել ցանկացած այլ բարիք, որից առավել այլ բարիք առկա չէ: Օրինակ՝ սահմանափակելով մարդու կենսաքանական սեռը փոխելու իրավունքը՝ փրկել անձի կյանքը:

Ցուրաքանչյուր դեպքում իրավիճակները, դեպքերը հասկանալու համար, պետք է նշենք, որ գործ ունենք օբյեկտիվ, անհրաժեշտ սահմանափակումների հետ, և գրեթե յուրաքանչյուր իրավական փաստաթղթում լինում են իրավիճակներ, որոնց առկայության դեպքում, կամ երբ որոշակի բարիք, արժեք պաշտպանելու համար անհրաժեշտ է հանուն այդ նպատակների, շահերի, արժեքների՝ սահմանափակել մարդու սոմատիկ իրավունքների իրացումը:

Իրավունքից հրաժարումը իրավատիրոջ իրավաշափ որոշումն է կոնկրետ իրավիճակում չօգտագործել իրավական հնարավորությունը կամ դադարեցնելու իրավաօգտագործման փուլում գտնվող սուբյեկտիվ իրավունքը:

Հարց է առաջանում, թե կարո՞ղ է սուբյեկտիվ իրավունքի կրողը հրաժարվել իր սոմատիկ իրավունքից:

Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը դիտարկելով սուբյեկտի կամքի արտահայտչամիջոց՝ կարող ենք փաստել, որ հենց ինը է որոշում որ դեպքում կամ ինչ չափով իրականացել իրեն ընձեռված հնարավորությունը: Այսինքն՝ յոսքը իրավունքի սուբյեկտի կողմից դրսորվող իրավաշափ վարքագիծի մասին է, որը կարող է լինել օգտակար (անհրաժեշտ), ցանկալի կամ բույլատրելի: Օրինակ՝ իգական սեռի ներկայացուցիչը, համապատասխան պահանջների շրջանակում, իրավունք ունի փոխնակ մոր ծառայություններ մատուցել, սակայն դա իր ցանկությունն է՝ իրակացնել իր իրավունքը, թե՝ ոչ: Չիրականացնելով իր սուբյեկտիվ իրավունքը՝ սուբյեկտը հրաժարվեց այդ իրավունքից, որը, սակայն, չխախտեց այլոց իրավուն-

ներն ու ազատությունները:

Մինչ կանդրադանանք սուբյեկտիվ իրավունքի հրաժարմանը, անհրաժեշտ է հասկանալ իրավունքից հրաժարման և իրավունքի կորստի տարբերությունները:

Հրաժարումը հայտնի առավելության կամ իրավունքի գիտակցաբար լրումն է կամ հրաժարումը: Կորուստը իրավունքը կորցնելն է՝ (սուբյեկտի) սխալ վարքագիծի պատճառով<sup>13</sup>: Իրավունքը (սուբյեկտից) վերցվում է որպես նրա հակարավական և կամային վարքագիծի ուրբակի հետևանք: Այն մեխանիկական և չնպատակադրված իրավունքի կորուստ է, որը տեղի է ունենում օրենքի գործողության շրջանակում՝ առանց հաշվի առնելու (սուբյեկտի) մտավոր վիճակը<sup>14</sup>:

Այսինքն՝ երբ յոսքում ենք իրավունքի կորստի մասին, սուբյեկտը զրկվում է իրավունքից՝ իր հակարավական վարքի պատճառով, երբ յոսքում ենք իրավունքից հրաժարման մասին, ապա այստեղ սուբյեկտն է հրաժարվում իրեն տրված հնարավորությունից, առավելությունից, արտոնությունից: Մարդու սոմատիկ իրավունքների համատետքստում քննարկման առարկա ենք դարձնում իրավունքից հրաժարման զաղափարը, երբ սուբյեկտիվ իրավունքի կրողը գիտակցաբար հրաժարվում է իրեն տրված որոշ առավելությունից, արտոնությունից կամ իրավունքից, այլ կերպ ասած՝ հնարավորությունից: Օրինակ՝ այն իրավիճակը, երբ անձը կարող է դառնալ ձվաբջիջի դոնոր, սակայն հրաժարվում է դրանից:

Պետության միջամտության սահմանները մարդու սոմատիկ իրավունքների իրացման համատեքստում

Սուբյեկտիվ իրավունքը ենթադրում է անձին տրված իրավական հնարավորություն՝ դրսորեկու իրավաչափի վարքագիծ: Հետևաբար, այդ իրավունքի իրացման արդյունքում իրավունքի սուբյեկտն ազատ է դրսորեկու այնպիսի վարքագիծ, որը համատեղելի է իրավական նորմի իրական բովանադակության հետ: Սուբյեկտիվ իրավունքի իրացման շրջանակում պետության դերակատարությունը հասցված է նվազագույնի, քանի պետության հիմնական գործառույթն այն է, որ սուբյեկտիվ իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախադրյալներ սահմանի, ապահովի դրա արդյունավետ պաշտպանությունը:

Որոշակի իրավիճակներում պետությունը ոչ միայն անհրաժեշտ և բավարար նախադրյալներ է ստեղծում սուբյեկտիվ իրավունքի իրացման համար, այլ նաև իրականացնում է որոշակի միջամտություն: Այդ միջամտությունը չպետք է կամայական բնույթ կրի, այլապես կխախտվի իրավունքի գերակայության սկզբունքը, ժողովրդավարական հասարակության ողջ արժեհամակարգը: Միջամտությունը պետք է լինի նպատակային, իիմնավոր

ված, համաշափ:

Օրինակ՝ դիտարկենք հետևյալ իրավիճակը, եթե կալանավայրում գտնվող և անհապաղ վիրահատության ենթակա բժշկական ցուցում ունեցող անձը հրաժարվում է բժշկական միջամտությունից: Սույն դեպքում կալանավորված անձը հրաժարվում է բժշկական միջամտության ենթարկվելու իրավունքից, քանզի ինքն է իր մարմնի սեփականատերը և համաձայնություն չի տալիս՝ ենթարկվելու բժշկական միջամտության: Պարտադիր բժշկական միջամտությունը ևս արգելված է. որոշակի բացառություններ թեպետն առկա են: Սույն իրավիճակում հարց է առաջանում, թե իրավասո՞ւ է պետությունը միջամտելու մարդու սոմատիկ իրավունքից հրաժարման վերացման վրա: Հարցի պատասխանը միատեսակ չէ՝ հաշվի առնելով տարբեր երկրների պրակտիկան, քանզի որոշ դեպքերում, այնուամենայնիվ, այդ միջամտությունը ցուցաբերում են այն տրամաբանությունից ելնելով, որ պետությունը պարտավոր է հոգ տանել քաղաքացու նկատմամբ, իսկ անձը, գտնվելով կալանավայրում, գտնվել է պետության հոգածության ներքո, բացի այդ, գալիս է մի պահ, եթե տվյալ անձն այլևս չի կարողանում իր կամքը հստակ արտահայտել, և, հետևաբար, այդ պահից առաջանում է պետության պարտավորությունը՝ փրկելու անձի կյանքը:

Մարդու իրավունքների եվլուպական դատարանը բազում գործերում նշել է, որ միջամտությունը չի հետապնդում «իրավաչափ նպատակ» կամ այն անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությանը: Այսինքն՝ պետության միջամտությունը մարդու ֆիզիկական անձեռնմխելիության խախտման դեպքում կդիտարկվի իրավաչափ, եթե առկա լինի իրավաչափ նպատակ, այն անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությանը:

Մարդու սոմատիկ իրավունքների խախտումների մասով Մարդու իրավունքների եվլուպական դատարանը գործերը քննում է կյանքի իրավունքի (հոդված 2-րդ), խոշտանգումների արգելքի (հոդված 3-րդ), մասնավոր կյանքի իրավունքի (հոդված 8-րդ) հորվածների շրջանակում: Մասնավորապես, թուրքիայի դեմ գործերից մեկով Մարդու իրավունքների եվլուպական դատարանը նշել էր, որ բժշկական միջամտությունը տեղի էր ունեցել, քանզի անձը կուլ էր տվել մեծ քանակությամբ թմրամիջոց, և, եթե ժամանակին բժշկական միջամտություն չկատարվեր, ապա անձը ինտոքսիկացիայի, թունավորման կենթարկվեր: Այստեղ առկա է իրավաչափ նպատակ, քանզի պետության միջամտությունը՝ մարդու սոմատիկ իրավունքի իրացման շրջանակում, փրկել է անձի կյանքը, որը վտանգի մեջ էր, հետևաբար առկա չէ ՄԻԵԿ 8-րդ հորվածի խախտում:

Անփոփելով վերը նշվածը՝ կարող ենք արձանագրել, որ մարդու սոմատիկ իրավունքների իրաց-

ման շրջանակում պետության միջամտությունն արդարացված է, եթե այդ միջամտությունը կատարվում է մեկ այլ արժեք պաշտպանելու համար, այդ պաշտպանվող արժեքն ավելին է, քան այն շահը, որ անտեսվում է: Օրինակ՝ եթե անձը ենթարկվում է հարկադիր բուժզննման, հարց է առաջանում, թե աղյո՞ք պետության միջամտությունն արդարացված է: Այստեղ գործ ունենք 2 տարբեր շահերի, մեկը մասնավոր բուժզննման ենթարկվել չցանկացող սուբյեկտի ֆիզիկական անձեռնմխելիությանը, իր մարմինը ինքնուրույն, իր ցանկությամբ դեկավարելու հայեցողությանը, իսկ մյուսը՝ հանրային, հասարակական պետության ներգրությունը իրավախախտումը բացահայտելու համար:

Հանրային և մասնավոր շահերը բախվում են, քանզի մասնավորը չի ցանկանում բուժզննման ենթարկվի, իսկ հանրայինը պարտադրությունը բացահայտել: Այսօր պետությունների պրակտիկան այնպիսին է, որ նախապատվությունը տրվում է հասարակական շահին՝ անտեսելով մասնավոր շահը, քանզի հասարակական շահով պաշտպանվող բարիքը բարձր է զնահատվում, որի համար գիշվում է մասնավոր շահով պաշտպանվող բարիքը:

Ըննարկենք հետևյալ օրինակը, եթե անձը պետական սահմանն անցնելիս հոգեմետ նյութեր է կուլ տալիս, որպեսզի չը ըրոնվի իրավապահ մարմինների կողմից: Իրավապահ մարմիններին տվյալ անձը ոչինչ չի ասում, միևնույն ժամանակ, իրավապահ մարմինների մոտ առկա է ողջամիտ կասկած այն մասին, որ անձը իր մարմնում հոգեմետ նյութ է թաքցնում: Իրավապահ մարմինները այդ ամենը կարող են բացահայտել միայն այն դեպքում, եթե անձը այդ մասին իրենց հայտնի, կամ անձը բուժզննում անցնի: Եթե անձը հրաժարվում է բուժզննում անցնել, իրավապահ մարմինների արհեստական փախում առաջացնելու միջավայր են ստեղծում՝ բռնի կերպով անձին բերանի մեջ նյութ լցնելով, որից հետո փախման միջոցով պարզվում է, որ իրավապահ մարմինների կասկածն իրական էր, այսինքն՝ բացահայտվում է ոչ իրավաչափ արարքը:

Հարց է առաջանում, թե վերը նշված դեպքում արդյոք պետությունն իրավաչափությունը էր խախտել անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը, միջամտեր իր մարմինն ինքնուրույն վերահսկելու, կառավարելու գործնարարությունը: Սույն իրավիճակում խախտվել է անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը, քանզի առանց անձի համաձայնության վերջինիս հանդեպ ֆիզիկական ուժը է կիրառվել, մասնավորապես, բռնել են ուոքերը և ձեռքերը, որպեսզի բերանի մեջ փախում առաջանալ նյութ լցնեն: Իհարկե, այստեղ չենք կարող խոսել խոշտանգման մասին, քանզի բռնության կիրառումը չի հասել ինտենսի-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վության այն աստիճանի, որ որակվեր որպես այդ-պիսին:

Խախտվել է մարդու սոմատիկ իրավունքը, ֆիզիկական անձեռնիստելիությունը, այն է՝ արհեստական փախում են առաջացրել՝ խախտելով իրավունքի սուբյեկտի մարմնի, օրգանիզմի ֆունկցիոնալությունը՝ առաջացնելով մարմնական, կենսարանական պրոցես՝ չպայմանավորված իրավունքի սուբյեկտի կամքով:

Մարդու սոմատիկ իրավունքների իրացման դեպքում պետության միջամտությունը պետք է հասցվի նվազագույնի: Այն չպետք է կամայական բնույթ կրի: Յուրաքանչյուր դեպքում, երբ պետությունը միջամտում է մարդու սոմատիկ իրավունքների իրացմանը, խախտում է մարդու ֆիզիկական անձեռնիստելիության իրավունքը, պետք է ունենա օրյեկտիվ և ողջամիտ նպատակ՝ հանուն որի, պետությունն իրականացնում է այդ միջամտությունը: Այդ միջամտությունը չի կարող պայմանավորված լինել նպատակահարմարությամբ, այն պետք է առավելագույն արժեքի փրկման, պաշտպանության դեր ունենա, այն պետք է անհրաժեշտ և իրավաչափ լինի:

**Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք արձանագրել, որ մարդու ազատ է իրացնելու իր սոմատիկ**

իրավունքը, բանի որ մարդու ֆիզիկական անձեռնմխելությունը հիմնարար արժեք է, մարդու ինքնավար է և ինքն է որոշում՝ ինչպես կառավարել իր մարմինը: Ազատությունը, որի իրավունքի սուբյեկտը դրսուրում է իր կոնկրետ սուբյեկտիվ սոմատիկ իրավունքն իրացնելիս, բացարձակ չէ. այն կարող է պետության կողմից սահմանափակվել: Այսինքն՝ պետությունը կարող է միջամտել մարդու սոմատիկ իրավունքի իրացման դեպքում՝ պայմանված, որ այդ միջամտությունը կամայական բնույթ չկրի, այն նպատակահարմարությամբ պայմանավորված չլինի: Պետության միջամտությունը պետք է լինի իրավաչափ, նպատակային, ըլիք «քարձրագույն արժեք» պաշտպանելու սկզբունքից, այսինքն՝ բացարձակ դեպքերում, ուստի ամեն պարագայում այն հնարավոր կյանքի ստուգել համաշափության կանոնի միջոցով: Պետության միջամտությունը և մարդու ազատության սահմանափակումը համատեղվում են, բանզի երկուսի նպատակն էլ ազատության չափի կամ իրավունքի իրացման սահմանափակմամբ առավել կարևոր արժեք պաշտպանելն է:

<sup>1</sup> Խոսելով մարդու սոմատիկ իրավունքների մասին՝ նշենք, որ այն առաջացել է «սոմա (soma)» բառից, որը լատիներենից բարգմանարար նշանակում է մարմնի: Սոմատիկ բառն օգտագործվում է բժշկության, կենսարանության, նյարդաբանության, իրավագիտության, ընկերաբանության և այլ ոլորտներում:

<sup>2</sup> Տե՛ս, Մալսինա Մ.Н. Статус органов, тканей, тела человека как объектов права собственности и права на физическую неприкосновенность, Законодательство, 2003, N 11, C. 14.

<sup>3</sup> Տե՛ս, Մալսինա Մ.Н. Личные неимущественные права граждан: понятие, осуществление, защита, 2-е изд., М., 2001, C. 89.

<sup>4</sup> Տե՛ս, The Consumer Society: Myths and Structures, [by] Jean Baudrillard (Sage, London, England, 1998), pp. 133-145.

<sup>5</sup> Տե՛ս, Human rights and disability: Equal rights for all, paper, 2008, page 11.

<sup>6</sup> Երբեմն անվանում են բարոյական անձեռնիստելիություն:

<sup>7</sup> Իրավունքի իրացումը իրավական նորմերի արտացոլումն է հասարակական հարաբերությունների սուբյեկտների իրավաչափ վարքագում, ընդ որում՝ իրավունքի իրացման ձևերն են՝ իրավունքի պահպանումը, իրավունքի կատարումը, իրավունքի օգտագործումը և իրավունքի կիրառումը:

<sup>8</sup> Մարմնի ձևափոխման այս մոդելը չի վերաբերում այն իրավիճակներին, երբ մարդու մարմինը ձևափոխվում է մարդու կամքից անկախ, օրինակ՝ ինսուլտի հետևանքով՝ մարմնի մի հատվածի թեքում, ավտովթարի հետևանքով՝ ողնաշարի կոտրվածքի ստացում և այլն:

<sup>9</sup> Մարդու հիմնական իրավունքների համատեքստում իրավունքի կրողը կամ իրավունքի սուբյեկտը ֆիզիկական և իրավաբանական անձն է:

<sup>10</sup> Իրավաբանական գրականության մեջ երբեմն իրավունքի իրացումն անվանում են իրավունքի կենսագործում:

<sup>11</sup> Տե՛ս, Ա. Ղամբարյան, Գ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, 2016թ., էջ 179:

<sup>12</sup> Տե՛ս, Ա. Ղամբարյան, Գ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, 2016թ., էջ 192:

<sup>13</sup> Տե՛ս, Johnson v. Zerbst, 304 U.S. 458, 464 (1938).

<sup>14</sup> Տե՛ս, Wayne R. Lafave & Jerold H. Israel, Criminal procedure § 11.3(c), at 546 n.4 (2d ed. 1992).

<sup>15</sup> Տե՛ս, Ralph Ruebner, Eugene Goryunov Giles v. California: Sixth Amendment Confrontation Right, Forfeiture by Wrongdoing, and a Misguided Departure from the Common Law and the Constitution, 40 U. Tol. L. Rev. 577 (2009), <http://repository.jmls.edu/facpubs> (01.07.2017).

Артак Геворгян

Соискатель кафедры теории и истории государства и права института права и политики Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

*Проблемы физической неприкосновенности (иммунитета)  
человека в свете соматических прав человека*

В данной научной статье, при свете соматических прав человека, были изучены следующие вопросы: физическая неприкосновенность человека, автономия человека, реализация телесных прав человека. А также, были обсуждены вопросы, касающиеся отказа от конкретных соматических прав, ограничения соматических прав, правила пропорциональности, применение объективных ограничений, а также роль государства при вмешательстве исполнения этих прав. В данной научной статье были также изучены вопросы о разнице между подходами в области прав и свобод, отказ от права и потери права, расхождения между публичными и частными интересами, подчеркивая важность физической неприкосновенности человека. В статье рассматриваются некоторые материально-правовые и процессуально-правовые вопросы в пределах физической неприкосновенности человека, вмешательства в частную жизнь человека.

**Ключевые слова:** физическая неприкосновенность человека, автономия человека, отказ от субъективного права, частная жизнь.

Artak Gevorgyan

Post-graduate researcher Chair of Theory and History  
of State and Law Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

*The issues of physical integrity of person under the light of somatic rights*

In the given research paper, under the light of somatic rights of person, the issues of physical integrity of person, autonomy of person, realization of body rights have been studied. Have been subject to discussion issues such as: release of concrete subjective right of person, elimination of somatic right, objective limitations, as well the role of the state in the process of intervention of the realization of that right. Has been subject to study issues such as: differences of loss of rights and release of rights, approaches to the understandings right and freedom, contradictions of the public and private interests, emphasizing the importance of physical integrity of person. In the given research paper, in the scope of intervention to physical integrity of person, private life of person, have been subject to discussion some material and procedural issues.

**Keywords.** Physical integrity of person, autonomy of person, release of subjective right, private life.